Վերյիշեալ ժողովին մէջ դաւանութեան գիր մ՚ալ կարդացուեցաւ, որպէս զի հասկցուի թէ ժողովուրդն իր կրօնական դաւանութիւնը փոխելու միտք չունի։ Այն դաւանութեան գիրն ալ ներկայ գտնուողներէն ստորագրուելով՝ Հռոմ և Բ. Դրան պիտի ներկայացուի։

Մասիս Թիւ 941

---

## ՀԱՅ-ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԵՂԲԱՐՔ
### Ի ԲԵՐԱ

Ինչպէս ազգային մէկ քանի թերթերու միջոցաւ առաջուց ծանուցուած էր, կիւրակէ օրը Բերա Լալէ փողոցին 13 տունը մեծ բազմութիւն գումարուելով ազգային ժողով մը տեղի ունեցեր է. ուր ներկայ գտնուեր են նաև երևելի անձինք. սակայն ընդունուած կրօնաւոր մը տեսնուած չէ գումարուողներուն մէջ, ժամ 9ին ՚ի ներկայութեան 4—500 Հայ—Հռոմէական եղբարց՝ ժողովը և նախապէս հայերէն լեզուաւ առենախօսութիւն մը տեղի ունեցեր է. յետոյ վիճաբանութիւններ եղեր են և իւրաքանչիւր որք հայրենի սիրով վառուած ու բորբոքած սրտովին ուխտեր են Հայ ապրիլ և Հայ մեռնիլ. անմիջապէս երկու հանրագիր ստորագրուիլ սկսան, առոնց մին բարեխնամ կառավարութեան կ՚ուղղուէր յորում Հռոմէական—Հայ ժողովրդեան առօսմաննեան տէրութիւնն ունեցած սէրն ու հաւարումն յայտնելէն զկնի՝ մի քանի միջէ բացատրուած են նաև ազգայնոց զՀասունեան• չուզելուն պատճառները։

Իսկ երկրորդը սրբազան Պապին ուղղեալ է, յորում Հռոմէական հայ ժողովրդեան ներկայ վիճակը բացատրուելէն յետոյ՝ մանրամասնաբար կը խօսի Հասունեանի գործած չարիքներուն նկատմամբ և ՚ի վերջոյ աւելցած է նաև, թէ Կաթոլիկ—Հայ ազգը սրբազան Պապին իրաւասութիւնը կը ճանչէ այնպէս՝ ինչպէս որ ճանչցած է մինչև ցարդ՝ թէ Կաթոլիկ հայերը երբեք Լատին ըլլալ չեն ընդունիր և աւելի կ՚ընտրեն հայութեամբ մեռնիլ քան օտար ազգի մը յարելով փառաւոր կեանք վարել. թէ մինչև ցարդ պահուած օրէնսդրութիւններուն եթէ սրբազան Պապն հակառակ կենալով ուզէ այլազգ դրութեան վերածել Հայ—կաթոլիկ ժողովուրդը, այն ատեն անոնք ալ պիտ՚ ստիպուին իրենց գլխուն ճարը նայիլ և պատճառն ու բոլոր հետևանքը ըլլալ սրբազան Պապին կամացն ու պահանջողութեանը կը յանձնեն։

Ժողովատեղւոյն անձկութեանը պատճառաւ Սամաթիայէն, Միջագիւղէն և ուրիշ հեռաւոր թաղերէ հարիւրաւոր անձինք նաև բազմաթիւ Բերացիք չը կրցան ժողովոյն մինչև աւարտումն սպասել, ուստի շատերը միմիայն հանրագիրներու ներքև ստորագրելէ ետք մեկնեցան։

Խօսակցութեան ժամանակ Աէօչեան վսեմ. Պօղոս էֆէնտի ծանուցեց թէ ինքը պատրաստ է 10,000 կանգուն գետին և 20,000 լիրա նուիրել որպէս զի յատուկ եկեղեցի մը շինուի եթէ արգելք ըլլայ ժողովրդեան որ այժմեան եկեղեցիները չերթան. դարձեալ վիճաբանութեան ժամանակ ապագայ անտեղութիւնները նկատողութեան առնելով որոշուեր է որ եթէ սրբազան Պապը ժողովրդեան իրաւացի բողոքանաց չըլսելով Հասունեանի խորհրդոց համեմատ վարուիլ սկսի, նոյն ատեն ժողովուրդն ալ համախումբ իր ընելիքը գիտէ արդէն։

Ժամն ինն ու կէսին ժողովը ցրուեր է, բայց ստորագրուիլ ուզող անձանց դիւրութիւն ըլլալու համար յատկապէս քանի մ՚անձինք նոյն ժողովատեղին սպասեր են։

Մինչև յառաջիկայ կիւրակէ առաւօտ ժամ 4 իւրաքանչիւր Հռոմէական հայ եղբայր ազատօրէն կրնան ստորագրել։ Այս ստորագրութեանց արդիւնքը, մեր ընթերցողաց փոքր ինչ ծանօթացնելու համար սաչափ միայն կըսենք որ կիւրակէ օրը ժամ 9էն մինչ. ժամ $10\frac{1}{2}$, 1200 ստորագրութիւն հաւաքուած էր. այս իրողութիւնն ակներև կը ցուցունէ որ մէկ քանի ճիզուիթներու ազդին անդին ըրած բանդագուշանաց համեմատ Հասունի ընդդիմադիրները քանի մինչքորներ և աննշան մարդիկ չեն եղեր, այլ՝ Հայ—Հռոմէականութեան ամենամեծ մասը. բաց ի Գաղատացիներէն՝ որոց արժանաւոր ածական մը տուած է Պօղոս առաքեալ....

Գեր. Հասուն՝ Հռոմայ Պապին մինչև ցարդ գուցէ այնպէս կը հաւատացնէր թէ իրեն հակառակողները մաս մը [illegible] գլուխի գաղափարներով տոգորուած և հերձուածողութեան միտեալ մարդիկ են, զորս բանադրանօք շանթահարել պէտք է. անտարակոյս Ս. Պապն այս հանրագրութիւնը տեսնելու ատեն աւելի իր աչերուն պիտի

հաւատայ քան թէ Հասունի ստապատիր խօսքերուն, և թերևս բարի նախատեսութեամբ կը փութայ ժողովրդեան բացարձակ իրաւունքն յարգելով ըստ այնմ վարուիլ :

Արդէն իսկ ինչպէս կը լսենք, ամուսնացեալ անձինք ոչ միայն իրենք կ'ստորագրեն, այլ՝ իրենց ընտանիքն ալ, որ ըսել թէ յեղափոխութեան այս մրրիկը կիներու մէջ անգամ իր ազդեցութիւնը բանեցուցեր է. յայտնի է նաև որ նախորդ կիւրակէ առաւօտուն Բերայի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյն և Միջագիւղի եկեղեցւոյն մէջ Հասունի անուան յիշատակութիւնը խառնաձայն աղաղակներով խլրդուեր է :

Ծիածան Թիւ 77

---

Գեր. Հասունեանի տեղապահ Առաքելեան Գերապայծառը՝ ինչպէս որ ծանուցուած էր, երկուշաբթի օրը Բերայի Ոսկեբերան եկեղեցին հանդիսաւոր պատարագ ըրաւ : Կառավարութիւնը՝ այս առթիւ խռովութիւն մը չծագելու կամ աղմկալից ցոյցեր չըլլալու համար՝ յառաջագոյն միջոցներ ձեռք առած էր : 300ի չափ ոստիկանութեան զինուոր դրուած էին եկեղեցւոյն շրջակայքը, և ոստիկանութեան պաշտօնէին կողմէն ալ ազդարարութիւն մը փակած էր եկեղեցւոյն դրանը վրայ, ծանուցանելով թէ ով որ բարձր ձայնով աղօթէ կամ պատարագը խափանել ուզէ՝ պիտի բռնուի ու պատժուի : Կըսուի թէ ոստիկանութեան ծպտեալ զինուորներ ալ մտեր են եկեղեցւոյն մէջ : Այս զգուշութեանց շնորհիւ ձայն մը չելաւ եկեղեցւոյն մէջ : Միայն թէ Գեր. Հասունեանի անուան յիշատակութիւնն եղած միջոցին ժողովրդեան մեծ մասը եկեղեցիէն դուրս ելաւ :

Ահաւասիկ խաղաղութեան պաշտօն կատարելու նոր միջոց մը. սուիններու պաշտպանութեամբ, հաշտութեան և սիրոյ խորհուրդ (պատարագ) կատարել : Արդարև նոր է այս քրիստոնէութեան մէջ :

Ո՞ւր կը մնայ Աւետարանին այն պատուէրը՝ թէ երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն :

Մասիս Թիւ 944

---

Երկուշաբթի աւուր Համազգեաց ընկերութեան ժողովատեղւոյն մէջ մատուցուած Ս. Պատարագն հայկական եկեղեցւոյ սովորական շքեղութիւնն ունեցեր է, ամբողջ ժամասացութիւնները ծանր և հնչուն արտասանութեամբ կատարուեր են, մինչդեռ մինչև ցայժմ գլխաւորապէս հռովմէական վարդապետք եկեղեցւոյ աղօթքները միշտ արագ և անհասկանալի եղանակաւ կ'արտասանէին. նաև "Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ"ի ատեն ամէնքն ալ միմեանց. ողջոյն տուեր են հայկական եկեղեցւոյ սովորութեանն համեմատ :

Ծիածան Թիւ 86

---

Մինչդեռ Կ. Պոլսոյ մէջ Կաթոլիկ ազգայնոց մէկ մեծ և կարևոր մասը Գեր. Հասունի լուծը թօթափելու և ազգին բռնաբարեալ իրաւունքները կենդանացնելու կաշխատին, Նորին գերապատուութիւնը Հռոմի մէջ իր անդրալեռնական իշխանութեան հիմունքն ամրացնելու գործը յառաջ կը վարէ :

Ազգային իրաւունքներն Հռոմի դահուն զոհելու պայմանագիրը, զոր Գեր. Հասուն արդէն Ս. Պապին տուած էր կըսեն, կը լսուի թէ Հռոմ գտնըւող Հայ Կաթոլիկ եպիսկոպոսաց ներկայացուեր է, որպէս զի անոնք ալ իրենց ստորագրութեամբ հաստատեն : Տասն և եօթն եպիսկոպոսաց տասն և հինգը հնազանդելով ստորագրեր են, միայն երկու Հիւրմիւզեան Գեր. Հարք չեն յանձն առեր ստորագրել : Ասոր վրայ Ս. Պապը քսան և չորս ժամ միջոց տուեր է իրենց, որպէս զի կամ ստորագրեն, կամ բանադրուելու պատրաստուին :

Եթէ այս լուրն ստոյգ է, կը մնայ տեսնել թէ յիշեալ Գեր. Հարք՝ սպառնալիքէն զարհուրելով ազգային վաղեմի իրաւունքները այլոց պէս զոհել յանձն պիտի առնո՞ւն, թէ բանադրանաց շանթերուն և անոնց հետևանացը դէմ խիզախելու քաջութիւնը պիտի ունենան :

Մասիս Թիւ 944

---

Երէկ՝ (փետր. 3) չորս Կաթոլիկ պատուաւոր Տիկնայք Բարձր. Դրան փաշային ապարանքը գացին՝ նորին բարձրութեան Հարէմին միջնորդութեամբ Կաթոլիկ ազգայնոց կողմէ շնորհակալութեան գիր մը մատուցանելու :

Նամծնուս նայելով, շնորհակալութեան գրոյն

հետ նաև խնդիր մատուցեր են թէ առժամանակեայ աղօթարան եղած Համազգեաց ընթերցարանը խիստ նեղ ըլլալով, ժողովրդեան մեծ մասը ժամերգութեան ներկայ գտնուելէ զուրկ կը մնան, ուստի Ոսկեբերանի եկեղեցին, որ ժողովրդեան ստըկովը շինուած է, ազգին աւանդապահ մասին յանձնուի, որպէս զի հանդարտ խղճով հոգևոր պաշտամանց ներկայ գտնուին.

Վերոյիշեալ տիկնայք են.

Տիկին Տիրան պէյ.

" Կէօչէեան.

" Խուրտաձեան.

" Սամուէլեան.

Նոյն

---

Բարձր. Մեծեպարքոս Ալի փաշային հրամանաւ Բերայի Ս. Օհան Ոսկեբերան եկեղեցին ազատ կաթոլիկ Հայոց տրուեր է բոլորովին, և երէկ մեծահանդէս ձայնաւոր Պատարագ մատուցուեցաւ հոն, ներկայ եղող ժողովրդեան թիւը 5-6.000ի կը հասնէր, այսչափ մեծ բազմութիւն մ'եկեղեցւոյն մէջ չը կրնալով տեղալ, շատեր փողոցին մէջ մնացին.

Ս. Պատարագի ատեն Հասունեանի անունը չը յիշատակուեցաւ.

Բոլոր ժամասացութիւններն ու արարողութիւններն Հայ Լուսաւորչական եկեղեցւոյ ճիշդ նմանութեամբ կատարուեր են.

Ծիածան թիւ 90

---

ԿԱԹՈԼԻԿ ԱԶԳԱՅԻՆՔ

Հռոմէական ազգայնոց մէջ տեսնուած աւանդապահական շարժումը բազում նկատմամբ ուշադրութեան արժանի է. Ազգային զգացումն երկար ժամանակ զսպուելէ և գրեթէ մարելէ ետև, նոր զօրութեամբ կը փայլատակէ և անդրալեռնական կղերին այնչափ տարիներէ 'ի վեր հիմնած շէնքը կործանելով կը տապալէ. Հռոմ իրար անցած է, բայց իր յետադիմական ջանից և անաթեմայից հակառակ, յառաջդիմութեան անյեղլի օրէնքը պէտք է որ իր գործը տեսնէ. Այնչափ ժամանակներէ 'ի վեր կաթոլիկ ազգայնոց վրայ տիրած թմրութիւնն և կղերին ազդեցութեան գերիշխանութիւնը չ'կըրցաւ բոլորովին անոնց երակին մէջ հոսած հայկական արեան ջերմութիւնը շիջուցանել, և ահա լատինականութեան դէմ բողոքելով միաբերան կը գոչեն. Մեք ալ Հայկայ որդիներն ենք.

Անհնար է որ ամէն հայ այս յայտարարութեան սրտագին ծափահարութիւններ չընէ. Քանի որ վէճը Գեր. Հասունի անձին դէմ ամուլ գանգատներու վրայ միայն կը կայանար, շարժումն բուն մեզ այնչափ կարևորութիւն չ'ունէր, ինչպէս որ առկէ յառաջ ալ մեր կարծիքը յայտնած էինք. Բայց գործն այն անձուկ շրջանէն անցաւ. Հռովմայ արբանեակներուն բռնաւորական ընթացքը ժողովրդեան ամէնէն պարզամիտներուն անգամ աչքը բացաւ և ամէնէն չափաւորականներուն համբերութիւնն սպառեց. Զզուելի տեսարան. առաջին անգամ տեսնուեցաւ Քրիստոսի կրօնին մէկ պաշտօնեայն, խաղաղութեան և սիրոյ աշակերտ մը, որոյ պարտքն է ներել և ոչ պատժել, չորս հարիւր այլազգի զինուորաց օգնութեամբ եկեղեցի երթալ և պատարագ մատուցանել 'ի յիշատակ նորա՝ որ իւր չարչարանաց գիշերն ըսաւ թէ իւր Երկնաւոր հօրն աղաչելով կրնայ հրեշտակաց բանակ մը օգնական իջեցընել, բայց և այնպէս ինքզինքն անզէն մատնեց կատաղի ամբոխի մը ձեռքը. Իսկ հոս անոր աշակերտեալ անձը մը՝ երկրաւոր զօրութիւնն իրեն 'ի թիկունս օգնութեան կոչելով կը ներկայանայ անզէն ժողովրդեան մը, որ միայն իր նուիրական իրաւանց բռնաբարութենէն կը գանգատի, և առանց բուռն միջոցներու՝ իր բռնաբարիչ համարած անձին անուան յիշատակութիւնը Ս. խորանին վրայէն լսել չուզեր.

Այս բաղդատութիւնը Միխիթ.քական զգացմամբ չէ որ կ'ընենք, այլ պարզապէս սրբապղծութեան մեծութիւնն ու կարևորութիւնը ցուցնելու համար. Տարակոյս չ'կայ որ ոստիկանութիւնը յանցանք չ'ունի անցեալ երկուշաբթի Ս. Յ. Ոսկեբերանի եկեղեցւոյն մէջ իւր ներկայութիւնը ցուցնելով, քանզի հրաւիրանօք գացած էր. ուստի բոլոր պատասխանատուութիւնն անոնց վրայ կ'իյնայ, որք այս անտեղի և անպատեհ հրաւէրն ըրած և ոստիկանութեան պաշտօնէին կողմէն ալ եկեղեցւոյ դուռն յայտարարութիւն մը փակցուցած էին, որով հրաման կը տրուէր արանց և կանանց պատարագի ժամանակ բարձր ձայնով աղօթք չ'ընել, և կը ծանուցուէր թէ "Ով որ բարձր ձայնիւ աղօթելով